

**ՄԱՐԿ ԱԶԴԱՐԻԴԻՍ**

ՀՀ վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի միջազգային արբիտրաժներում և օտարերկրյա դատարաններում ՀՀ շահերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ  
ՄՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Կոռուպցիայի դեմ պայքարն առնվազն ձևական տեսանկյունից հանդիսացել է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առաջնահերթություններից դեռևս 21-րդ դարի սկզբից: Բովանդակային տեսանկյունից հակակոռուպցիոն պայքարը վերաիմաստավորվեց 2018 թվականի հեղափոխությունից հետո՝ դառնալով քաղաքական իշխանության գլխավոր «թշնամին»: Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում իրականացված բազմաթիվ բարեփոխումների մեջ առանձնակի հիշատակման են արժանի Հատուկ քննչական ծառայության հենքի հիման վրա նախաքննություն և օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող հակակոռուպցիոն մասնագիտացված մարմնի՝ հակակոռուպցիոն կոմիտեի և մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանների ստեղծումը, ինչպես նաև «Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը: Իր հերթին, էական համակարգային փոփոխություններից անմասն է մնացել ՀՀ դատախազությունը՝ սահմանափակվելով կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող և այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառնություններ իրականացնող վարչությունների ստեղծմամբ: Մինչդեռ դատախազությունը հանդիսանում է հակակոռուպցիոն պայքարի անփոխարինելի հիմնական դերակատարը թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական ոլորտում:

Սույն հոդվածը նվիրված է հակակոռուպցիոն գործերով ՀՀ գլխավոր դատախազությունից առանձնացված հատուկ դատախազական մարմնի ստեղծման հիմնախնդրին: Մասնավորապես, հետազոտության շրջանակներում քննարկման առարկա է դառնալու ներկա համակարգային իրավիճակի հիմնավորվածությունը և արդյունավետությունը, ինչպես նաև նոր անկախ մարմնի ստեղծման անհրաժեշտությունը:

Հոդվածի շրջանակներում փորձ է արվել համապարփակ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ներկա հակակոռուպցիոն համակարգը՝ առանձին ուշադրություն դարձնելով խնդրահարույց տարրերին: Ուսումնասիրվել է նաև խնդրո հարցի առնչությամբ միջազգային լավագույն փորձը:

Ի թիվս այլնի, ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում հակակոռուպցիոն ռազմավարության պետական քաղաքականության առաջնահերթություն հանդիսանալը, հակակոռուպցիոն գործիքակազմի շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը՝ ներառյալ կոռուպցիոն բարձր ռիսկայնության ոլորտներում զսպումների և հակակշիռների գործիքների ներդրումը, լիազորությունների կոնսոլիդացիայի բացառման անհրաժեշտությունը:

**Հիմնաբառեր**- դատախազություն, հակակոռուպցիոն ռազմավարություն, փոխզսպում, հակակոռուպցիոն համակարգ, կոռուպցիոն ռիսկեր:

**Ներածություն**

«Դեպի իրական ժողովրդավարություն իր աներկբա ու գիտակից ընտրությունը կատարած հայ ժողովուրդը չունի կայուն զարգացման այլընտրանք, քան կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողականության և անընդունելիության չբեկվող մթնոլորտի ու վերաբերմունքի ձևավորումը:»

Վերոնշյալ բառերով է սկսվում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների ծրագիրը (այսուհետ նաև՝ Ռազմավարություն), որը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ներկայիս համակարգի ստեղծման հիմքում է եղել: Ի թիվս այլնի, դրանով են նախանշվել Հատուկ քննչական ծառայության հենքի հիման վրա

նախաքննություն և օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող հակակոռուպցիոն մասնագիտացված մարմնի՝ հակակոռուպցիոն կոմիտեի և մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանների ստեղծման, ինչպես նաև «Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) ընդունման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, թե՛ վերոնշյալ փաստաթուղթը, թե՛ հետագա հակակոռուպցիոն բարեփոխումների հիմք հանդիսացած այլ փաստաթղթերը հավուր պատշաճի ուշադրություն չեն դարձրել հակակոռուպցիոն պայքարի անփոխարինելի հիմնական դերակատարի՝ դատախազության համակարգային փոփոխությունների հարցին՝ սահմանափակվելով կառուցվածքային առանձին ստորաբաժանումների ստեղծմամբ:

www.aradaradutyjournal.com

Առերերևույթ խնդրահարույց մնան կարգավորումը, բնականաբար, առաջ է բերում անհրաժեշտությունը քննարկման առարկա դարձնել դատախազական համակարգում հակակոռուպցիոն էական բարեփոխումների իրականացման պահանջը և համակարգի ներկայիս իրավիճակի հիմնավորվածությունը և արդյունավետությունը:

Հետազոտության շրջանակներում, վերոնշյալ հիմնական հարցերից զատ, քննարկվելու է նաև, թե՛

- ինչպիսի՞ն է ՀՀ հակակոռուպցիոն ներկայիս համակարգը՝ ովքե՞ր են հիմնական դերակատարները և ի՞նչ իրավասություններ ունեն,

- ինչպիսի՞ն է խնդրո առարկա հարցերի վերաբերյալ միջազգային լավագույն փորձը:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են պատմական և տրամաբանական, համեմատախրավական, անալիզի և սինթեզի, ինչպես նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները:

**Հիմնական հետազոտություն**

**1. ՀՀ ներկայիս հակակոռուպցիոն համակարգը**

Ներպետական մակարդակում հակակոռուպցիոն համակարգը ներկայումս գործում է երկու հիմնական ուղղություններով՝ քրեական և քաղաքացիական:

**1.1. Հակակոռուպցիոն կոմիտեն**

Առաջինը, ինչպես տրամաբանորեն ենթադրելի է, վերաբերում է կոռուպցիոն բնույթի հանցանքների բացահայտմանը, նախաքննության իրականացմանը, ենթադրյալ հանցանք կատարած անձանց քրեական հետապնդմանը և իրավասու դատարանների կողմից նրանց պատասխանատվության ենթարկելու հարցի լուծմանը: Հակակոռուպցիոն պայքարի քրեական ոլորտի «առաջնամարտիկը» հակակոռուպցիոն կոմիտեն է, որը Հատուկ քննչական ծառայության հենքի և 2021 թվականի մարտի 24-ին ընդունված և նույն թվականի հոկտեմբերի 23-ից ուժի մեջ մտած «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված, կոմբինացված գործառույթներով անկախ պետական մարմին է: Հակակոռուպցիոն կոմիտեն ոչ միայն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը<sup>4</sup>, այլ նաև իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն<sup>5</sup>:

Հատկանշական է, որ օրենսդիրը հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների համար նախատեսել է առավել խիստ պահանջներ, քան Հայաստանի Հանրապետության մյուս նախաքննություն

իրականացնող մարմնի՝ քննչական կոմիտեի ծառայողների համար: Այսպես, ի լրումն քննչական կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը պետք է ունենա ռուսերենից, անգլերենից և ֆրանսերենից առնվազն մեկ ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն (բացառությամբ կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձանց)<sup>6</sup>, ինչպես նաև լինելով դատավոր կամ նախկին դատավոր, դատախազ, քննիչ, նախկին դատախազ կամ նախկին քննիչ, հետաքննիչ, օպերիվազոր, նախկին հետաքննիչ կամ նախկին օպերիվազոր, փաստաբան կամ նախկին փաստաբան՝ վերջին երեք տարվա ընթացքում ստացած չլինի խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից: Քննչական կոմիտեի ծառայողի դեպքում բացակայում են նաև հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին ներկայացված փորձառության պահանջները՝ պաշտոնի նշանակման համար անհրաժեշտ ստաժը և նախորդիվ իրականացված գործունեության բնույթը:

Վերոգրյալից ակնհայտ է, որ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին ներկայացվում են ոչ միայն մասնագիտական, այլ նաև՝ բարեվարքության մասով ավելի խիստ պահանջներ:

Երկու նախաքննական մարմինների միջև տարբերությունները հատկապես պատկերավոր են վերջիններիս ղեկավարների օրինակների համեմատությամբ: Այսպես, հակակոռուպցիոն կոմիտեն ղեկավարվում է վերջինիս նախագահի կողմից, որի ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ՝ բաղկացած Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակված մեկական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչից: Մյուս կողմից, քննչական կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը ՀՀ վարչապետի ներկայացմամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ կարող է նշանակվել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին ներկայացվող օրենքով սահմանված ընդհանուր պահանջները բավարարող անձը, որը մինչև նշանակումն զբաղեցրել է քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ ունի դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության

www.aradaradutyjournal.com

ուրրտներում գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն հինգ տարվա ընդհանուր՝ իրար փոխարացնող ստաժ՝ իսկ քննչական կոմիտեի նախագահի դեպքում ոչ մի նման լրացուցիչ պահանջ առկա չէ:

1.2. Դատախազությունը

Հակակոռուպցիոն պայքարի քրեական ոլորտի հաջորդ էական դերակատարը դատախազությունն է, որին վերապահված են դատարանում հակակոռուպցիոն հանցանքներով մեղադրանքը պաշտպանելու, քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու բացառիկ իրավասությունները<sup>10</sup>: Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանող հիմնական իրավական ակտը՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, չունի անգամ մեկ հիշատակում, որը կառանձնացնի հակակոռուպցիոն գործերով իրենց լիազորություններն իրականացնող դատախազներին: Ըստ դատախազության կառուցվածքային բաժանման՝ անմիջապես Գլխավոր դատախազության ենթակայության ներքո գործում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, որը հսկողություն է իրականացնում այն բոլոր հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակում մինչդատական վարույթի նկատմամբ, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում<sup>11</sup>: Փաստացի, վերոգրյալ կառուցվածքային հատուկ ստորաբաժանման ստեղծումը, որն ըստ էության փոխարինել է հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանը, միակ փոփոխությունն է դատախազությունում իրականացված, որն առնչվում է հակակոռուպցիոն պայքարի քրեական ոլորտին, ինչպես նաև միակ առանձնահատկությունն է կոռուպցիոն հանցանքների առնչությամբ իրենց լիազորություններն իրականացնող դատախազների՝ ի համեմատություն այլ դատախազների: Տվյալ վարչությունն ու վերջինիս դատախազները բոլոր ասպեկտներով ունեն նույն կարգավիճակը, ինչ գլխավոր դատախազության մեկ այլ ստորաբաժանում ու դատախազներ և, բնականաբար, ենթակա են գլխավոր դատախազին և վերջինիս համապատասխան տեղակալին:

Միևնույն ժամանակ, դատախազությունը նաև Հակակոռուպցիոն պայքարի քաղաքացիական ոլորտի հիմնական դերակատարն է: Այսպես, վերջինիս իրավասությունների շրջանակը ներառում է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցերի հարուցումը դատարաններում, ինչն ընդգրկում է նաև «Ապօրինի ծագում ունեցող գույ-

քի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը<sup>12</sup>, որն իրականացվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների կողմից: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազները, հանդիսանալով Օրենքի իմաստով իրավասու մարմին<sup>13</sup>, ունեն նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն իրականացնելու լիազորություն:

Ի տարբերություն հակակոռուպցիոն քրեական գործառույթներ իրականացնող դատախազների, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների համար նախատեսված են ընդհանուրից որոշակիորեն տարբերվող կարգավորումներ: Նախ և առաջ վերոգրյալը վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազ նշանակվելու համար թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող լրացուցիչ պահանջին՝ առնվազն երկու տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժի առկայությանը<sup>14</sup>: Բացի այդ, հատկանշական է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից ազատվելու հիմքերը չեն տարածվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վրա<sup>15</sup>: Վերոգրյալը վկայում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների համար մասնագիտական առավել բարձր չափանիշներ սահմանելու օրենսդրի միտման մասին: Ընդգծելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների առանձնահատուկ կարգավիճակը՝ օրենսդրորեն արգելված են գործուղումները դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանումից դատախազության համակարգի այլ ստորաբաժանումներ կամ հակառակը<sup>16</sup>, նույն պրզեքը տարածվում է նաև փոխադրման վրա<sup>17</sup>: Ոչ նվազ կարևոր է նաև գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի հատուկ կազմն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի դեպքում՝ ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների

www.aradaradutyjournal.com

քննության առնվազն երեք տարվա փորձառություն ունեցող երկու լրացուցիչ փորձագետի առկայությունը :

1.3. Հակակոռուպցիոն դատարանները

Երրորդ և վերջին հիմնական դերակատարը հակակոռուպցիոն դատարաններն են: Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են հակակոռուպցիոն դատարանը՝ որպես առաջին ատյանի մասնագիտացված դատարան, կազմված կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներից, վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, որը ևս ձևավորված է համապատասխանաբար կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներից : Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի կազմում գործում է հակակոռուպցիոն պալատը, որը կրկին բաղկացած է կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմներից :

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին ի համեմատություն քննչական կոմիտեի ծառայողների լրացուցիչ պահանջների ներկայացման մոտեցմանը համահունչ՝ հակակոռուպցիոն դատավորների համար ևս նախատեսված են առավել խիստ պահանջներ: Այսպես, ի լրումն դատավոր նշանակվելու ընդհանուր սահմանափակումների, Հակակոռուպցիոն դատարանի դատավոր չի կարող նշանակվել այն անձը, որը, լինելով դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերիվագոր, փաստաբան կամ նախկին դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերիվագոր, փաստաբան վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից :

Քաղաքացիական ոլորտում հակակոռուպցիոն դատարանին են ենթակա դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և Օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը<sup>22</sup>: Հակակոռուպցիոն դատարանները նաև իրականացնում են քրեական արդարադատություն<sup>23</sup> ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով՝ ներառյալ դատական երաշխիքների վարույթները<sup>24</sup>: Ընդ որում, եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը

կրկին քննում է հակակոռուպցիոն դատարանը<sup>25</sup>:

2. Փոփոխությունների անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության ներկայիս հակակոռուպցիոն համակարգի, դրա հիմնական դերակատարների ընդհանրական բնութագիրը, ինչպես նաև վերջիններիս և ոչ հակակոռուպցիոն ոլորտում համանման իրավասություններ ունեցող համապատասխան մարմինների միջև տարված համեմատականների արդյունքում վեր հանված էական տարբերությունները, ընդգծելով Դատախազության դեպքում յուրահատուկ մոտեցման դրսևորումը, եթե չեն վկայում փոփոխությունների անհրաժեշտության մասին, ապա առնվազն հարց են առաջացնում, թե ինչով է պայմանավորված դատախազական համակարգում հակակոռուպցիոն համակարգի (հատկապես քրեական ոլորտի) բարեփոխումների ստագնացիան և արդյոք այն արդարացված է:

2.1. Ինստիտուցիոնալ ասիմետրիան

Բարձրացված հարցադրմանն առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ համակարգային ամբողջականության և հետևողականության տեսանկյունից:

Ինչպես արդեն իսկ նշվեց, դատախազությունը բացառություն է հանդիսացել այն իմաստով, որ հակակոռուպցիոն պայքարի մասնակից միակ պետական մարմինն է, որը կառուցվածքային էական փոփոխությունների չենթարկվեց՝ ուղղված հակակոռուպցիոն գործառնություններ իրականացնող դատախազների առանձնացմանը և նրանց առանձնահատուկ կարգավիճակի սահմանմանը: Հետագոտության սույն հատվածում նկարագրված երևույթը կգնահատվի բացառապես հակակոռուպցիոն համակարգի ամբողջականության և քաղաքական ռազմավարության հետևողականության համատեքստում:

Հակակոռուպցիոն նախաքննական մարմնի և դատարանների ստեղծման լույսի ներքո քրեադատավարական շղթայի միջին օղակի՝ դատախազության անփոփոխությունն առաջ է քաշում ներկայիս իրավիճակի հիմնավորվածության հարցը. կա՞ն արդյոք ծանրակշիռ հիմքեր առ այն, որ նախաքննական և արդարադատություն իրականացնող մարմիններում անհրաժեշտ էին կատարված փոփոխությունները, և միաժամանակ դրանք չէին տարածվում դատախազության նկատմամբ: Պատասխանը միանշանակ է՝ ոչ:

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծման հիմք հանդիսացած օրենքի նախագծի հիմնավորման (այսուհետ նաև՝ Հիմնավորում) մեջ տվյալ օրենսդրական նախաձեռնությանը հանդես եկած մարմինը, առանձնահատուկ կարևորելով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի էական փոփոխությունը, որը կրկին բխում է նախորդիվ հիշատակված Ռ-ազմավարու-

թյունից, ուղղակիորեն պայմանավորել է այս դատարանների ստեղծումը (1) կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների բարդությամբ և հանրային բարձր վտանգավորությամբ, որից բխում է առավել մասնագիտացված դատարաններ ունենալու անհրաժեշտությունը, (2) կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի կայացման և շարունակական զարգացման անհրաժեշտությամբ, (3) կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի և գործերի քննության արդյունավետության աստիճանի բարձրացմամբ:

Ի թիվս այլնի, Հիմնավորման մեջ ասվում է, որ.

«Մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու հիմնական փաստարկներից է (...) ամբողջականությունը - մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու հաջորդ փաստարկը հանգում է նման դատարաններ ստեղծելու միջոցով կոռուպցիայից և քաղաքական գործիչների ու ազդեցիկ շրջանակների անիրավաչափ ազդեցությունից զերծ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից կոռուպցիոն գործերով արդարադատություն իրականացնելու ձգտման մեջ: Ընդ որում, եթե այս փաստարկը համադրենք հայկական իրականությանը, ապա ասվածի անուղղակի օրինակ կարող է հանդիսանալ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման նախաձեռնությունը, որը պայմանավորված է, ի թիվս այլնի, կոռուպցիոն հանցագործությունների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և անկախ քննության ապահովման անհրաժեշտությամբ: Ուստի, կարող է առաջանալ տրամաբանական հարց, թե արդյոք պետք չէ նման անկախությունը երաշխավորելու գործուն մեխանիզմներ ստեղծել՝ պետություն - հանցանք գործած անձ հարաբերության հաջորդ փուլի, մասնավորապես արդարադատության իրականացման համար: Նման գործուն մեխանիզմը կարող է հանդիսանալ հատուկ մասնագիտացված դատարանը, որը արդարադատություն կիրականացնի կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով: Այս առումով հետաքրքիր է Մլովակիայի փորձը: Մասնավորապես, Հատուկ քրեական դատարանի իրավագործությունն առավել վտանգավոր կոռուպցիոն հանցագործությունների վրա տարածելու փաստարկներից մեկը հանդիսանում էր այն մտահոգությանը, որ կոռուպցիայից իշխանությունների և քրեական շրջանակների տեղական կապերը հնարավորություն կտային միջամտել շրջանային դատարանների կողմից արդարադատության իրականացման գործընթացին, մինչդեռ մայրաքաղաքում տեղակայված հատուկ դատարանի ստեղծումը կարող է արդյունավետորեն լուծել տվյալ խնդիրը»<sup>26</sup>:

Վերոգրյալ փաստարկների ուսումնասիրությունից ակնհայտորեն պարզ է, որ չկա որևէ ողջամիտ հիմնավորում, թե ինչու դրանք հավասարա-

պես չպետք է վերաբերել լինեն դատախազական համակարգին: Ավելին, ի թիվս այլնի, Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարան ստեղծելու հիմք է հանդիսացել հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման նախաձեռնությունը՝ որպես ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականության ապահովմանն ուղղված քայլ: Նման պայմաններում առավել քան տրամաբանական է, որ նման մոտեցումը պետք է ամբողջությամբ տարածվի նաև Հակակոռուպցիոն մասնագիտացված նախաքննական մարմնի և հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի միջև գտնվող մարմնի՝ դատախազության նկատմամբ:

Իր հերթին, կառուցվածքային հետևողականությունը և ինստիտուցիոնալ ամբողջականությունը խիստ կարևոր են, քանի որ հակակոռուպցիոն համակարգը կարող է արդյունավետորեն գործել միայն այն դեպքում, երբ դրա բոլոր օղակները ձևավորված են նույն տրամաբանությամբ, նույն մակարդակի մասնագիտացմամբ և փոխլրացնող գործառնություններով: Եթե համակարգի մի մասը (նախաքննական մարմինները, դատարանները) բարեփոխված է, իսկ մյուսը՝ դատախազությունը, չի ենթարկվել կառուցվածքային փոփոխությունների, ապա ստեղծվում է «թույլ օղակ», որը նվազեցնում է ամբողջ համակարգի արդյունավետությունը, առաջացնում է ինստիտուցիոնալ անհամատեղելիություն, թույլ հսկողություն և անհավասար ստանդարտներ: Իր հերթին կոռուպցիան օգտվում է կառուցվածքային թույլ կողմերից: Եթե երկու ինստիտուտներ բարեփոխվեն, բայց մեկը՝ ոչ, ապա այդ չբարեփոխված ինստիտուտը դառնում է կոռուպցիոն միջամտության լավագույն թիրախը: Կառուցվածքային հետևողականությունը կանխում է դա՝ ապահովելով, որ համակարգի ոչ մի բաղադրիչ չմնա հնացած կամ խոցելի: Կառուցվածքային հետևողականությունը թույլ է տալիս ապահովել նույնական մասնագիտական մոտեցումներ, կանխել համակարգային բախումները, բարձրացնել հաշվետվողականությունը, նվազեցնել միջամտությունների ռիսկերը և ձևավորել լիարժեք, համահունչ ու կայուն հակակոռուպցիոն միջավայր: Ուստի, հակակոռուպցիոն ինստիտուտների, և հատկապես՝ դատախազության համատեքստում, կառուցվածքային հետևողականությունը և ինստիտուցիոնալ ամբողջականությունը հաջողության հիմնական տարրերից են:

Ինստիտուցիոնալ ամբողջականությունը կարևոր է նաև հանրային վստահության և ընկալման համատեքստում: Անկախ հակակոռուպցիոն դատախազության ստեղծումը կարող է ծառայել որպես ինստիտուցիոնալ բարեփոխում, որն անմիջականորեն ուղղված է հանրային վստահության վերականգնմանը՝ փարատելով կասկածներն առ այն, որ իրականացվում է քաղաքականապես մո-

տիվացված ընտրողական արդարադատություն, իսկ բարձրաստիճան պաշտոնյաները խուսափում են պատասխանատվությունից:

2.2. Արդյունավետությունը և մասնագիտացվածությունը

Ինստիտուցիոնալ ամբողջականության հետ սերտորեն փոխկապակցված է նաև դրա արդյունավետությունը, որին հասնելու համար անգերագնահատելի է վերջինիս բաղադրիչների մասնագիտացվածությունը: Կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների բարդությունն անխոս վկայում է դրանց դեմ պայքարին առավել բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող կադրերին ներգրավելու անհրաժեշտության մասին: Մի կողմից դա նշանակում է, որ կոռուպցիայի դեմք պայքարին ներգրավված մասնագետները պետք է պարբերաբար և շարունակաբար կատարելագործեն իրենց կոմպետենցիաները, իսկ մյուս կողմից ակնհայտ է դարձնում համապատասխան գործառույթներ ունեցող պաշտոններին նշանակվելու առավել բարձր չափանիշների սահմանման անհրաժեշտությունը: Այլ խոսքով, կոռուպցիայի դեմ պայքարի գործում պետք է ներգրավված լինեն առավել արժանի և պրոֆեսիոնալ մասնագետները, ովքեր իրենց հերթին նույնպես պետք է շարունակաբար բարձրացնեն իրենց մասնագիտական կարողությունները:

Վերոգրյալ պահանջների ներդրման վառ օրինակ է Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծումը, ինչի մասին վկայում է նախորդիվ կատարված համեմատական ուսումնասիրությունը վերջինիս և ՀՀ քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու թեկնածուներին ներկայացվող պահանջների վերաբերյալ: Մյուս կողմից, դատախազական համակարգը մասնագիտացվածության տեսանկյունից նույնիսկ պետք է մեկ քայլ ավելի առաջ լինի նախաքննություն իրականացնող մարմնից, ինչն ամենևին չի ենթադրում վերջինիս ստորադասումն առաջինին, այլ տրամաբանական իրողությունն է, որը բխում է դատախազության հիմնական գործառույթներից մեկի՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության իրականացման անհրաժեշտությունից: Իրապես դժվար է պատկերացնել, թե ինչպես պետք է ոչ մասնագետը հսկողություն իրականացնի մասնագետի նկատմամբ և գնահատի վերջինիս գործողությունների և անգործության իրավաչափությունը, նախաքննության համակողմանիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև նմանաբնույթ այլ հարցեր, որոնք կոռուպցիոն հանցանքների դեպքում ունեն սպեցիֆիկ առանձնահատկություններ, ինչը ենթադրում է նեղ մասնագիտական պատրաստվածության առկայություն:

Հատկանշական է նաև, որ թեև ողջ ամբողջական, սակայն որոշ չափով վերոգրյալ պահանջներ

րից բխող մեխանիզմներ ներդրվել են դատախազական համակարգում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթներ իրականացնող դատախազների համար՝ անտեսելով հակակոռուպցիոն քրեաիրավական ոլորտի դատախազներին:

2.3. Չսպումների և հակակշիռների մեխանիզմների բացակայությունը

Առանձնացված հակակոռուպցիոն դատախազության անհրաժեշտության մասին վկայող մյուս փաստարկը վերաբերում է առկա համակարգի կոռուպցիոն բարձր ռիսկայնությանը: Հակակոռուպցիոն պայքարը կիմաստագրվել, եթե կոռուպցիայի դեմ պայքարող մարմինները հենց առաջին հերթին չներդնեին մեխանիզմներ ներքին կոռուպցիան բացառելու համար<sup>27</sup>: Նման խնդիրը ներհատուկ չէ Հայաստանի Հանրապետությանը կամ դատախազությանը. այն հանդիսանում է համատարած խնդիր իշխանության աստիճանակարգային կենտրոնացում ունեցող բոլոր համակարգերում:

Վերոգրյալն առաջին հերթին վերաբերում է ներկա համակարգի պայմաններում փոխզսպման և հակակշիռների մեխանիզմների բացակայությանը: Դատախազական բացառիկ լիազորությունների իրացումը, հանդիսանալով հակակոռուպցիոն քրեական և քաղաքացիական արդարադատության իրականացման անփոխարինելի նախադրյալը, անհնար է դարձնում դատախազության մասնակցության բացառումը կամ փոխարինումը մեկ այլ մարմնով: Այսինքն՝ եթե անգամ նախաձեռնված քրեական վարույթը վերաբերի դատախազության պաշտոնատար անձի կողմից ենթադրաբար կատարված կոռուպցիոն հանցանքին կամ վերջինիս վերաբերյալ իրականացվի ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ուսումնասիրություն, ապա միևնույն է տվյալ գործառույթները՝ դատախազական հսկողություն, մեղադրանքի պաշտպանություն, հայցադիմումի ներկայացում և այլն, իրականացվելու են նույն մարմնի մեկ այլ աշխատակցի կողմից, ինչն առերևույթ ռիսկային է և հղի տարատեսակ չարաշահումների վտանգով:

Ընդ որում, պարտադիր չէ անգամ անձնական մտերիմ հարաբերությունների կամ անձնական շահագրգռվածության առկայությունը վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներ դատախազների միջև: Ինքնին միևնույն մարմնի մաս կազմելը և գործընկերային կապը բավարար է ողջամիտ մտահոգության համար, որ կարող է ձևավորվել դատախազական կորպորատիվիզմ՝ պայմանավորված դատախազական սոլիդարությամբ, գործընկերոջը հետապնդելու դժկամությամբ կամ կարիերային կախվածությամբ, եթե խոսքը գնում է վերադասի մասին: Մյուս կողմից, նման վարքագիծն ապահովագրում է դատախազին, քանի որ եթե ինքը գործի

գործընկերոջ դեմ, ապա առավել բարձրանում է հավանականությունը, որ մեկ այլ դատախազ չի խորշի նույնն անել իր նկատմամբ և հակառակը՝ ներքին հանդուրժողականությունը պարարտ հող է ստեղծում կոռուպցիոն դրսևորումների համար, քանի որ խիստ նվազում է պատասխանատվության ենթարկվելու և անգամ հետապնդվելու հավանականությունը:

Չսպումների և հակակշիռների մեխանիզմների բացակայությունը դատախազության պարագայում պատկերավոր է հակակոռուպցիոն և քննչական կոմիտեների աշխատակիցների օրինակով: Այսպես, քննչական ենթակայությունը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը սահմանում է, որ նախաքննությունը հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները՝ և հակառակը՝ նախաքննությունը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները<sup>28</sup>: Մինչդեռ, դատախազության պարագայում բացակայում է որևէ նման գործիք: Ավելին, դատախազական գործառույթներն ինքնին բավարար են յուրաքանչյուր քրեական վարույթ կաթվածահար անելու համար, քանի որ առանց դատախազության կամքի չի կարող խոսք գնալ ոչ՝ քրեական հետապնդման, ոչ՝ գույքի բռնագանձման հայցադիմում ներկայացնելու և ոչ՝ էլ քրեական գործը դատարան ուղարկելու մասին:

Դատախազական ներկա համակարգի պայմաններում մեծ է նաև վերադատության կողմից միջամտության վտանգը: Անգամ չանդրադառնալով հնարավոր տարատեսակ ճնշումների հնարավորությանը՝ կարգապահական վարույթի կամ այլ եղանակներով, բավարար է ինքնին կոնկրետ գործի վերամակագրման, զգայուն գործերից ոչ ցանկալի դատախազների հեռացման հնարավորությունը, որպիսի լիազորությունների իրականացումն անգամ որևէ պատճառաբանում չի պահանջում համապատասխան վերադաս դատախազից: Մինչդեռ, բարձր մակարդակի կոռուպցիոն դեպքերը պահանջում են մեկուսացում հիերարխիկ կախվածությունից, ինչը կարող է լավագույնս ապահովվել առանձնացված և մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազական գործառույթներով մարմնի ստեղծմամբ: Նման առանձնացված մարմինը կնվազեցնի նաև քաղաքական կաշկանդվածության, ընտրողական հետապնդման կամ ան-

գործողության ռիսկը:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ կարող ենք պնդել, որ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ բարեփոխումներից դատախազության անմասն մնալը ողջամտորեն արդարացված չէ, իսկ համապատասխան փոփոխությունների իրականացումն անհրաժեշտ է:

3. Միջազգային ստանդարտները և օտարերկրյա փորձը

Վերոնշյալ համակարգային խնդիրների վերլուծությունից բխող հարցերի պարզաբանման նպատակով օգտակար կարող է լինել անդրադառնալ նաև այլ պետությունների փորձին և միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես՝ հակակոռուպցիոն դատախազական մարմինների ստեղծման և գործառնական անկախության ապահովման մոդելներին:

Պետք է արձանագրել, որ առկա է միջազգային և Եվրոպական միության տարածաշրջանային միտում՝ դատախազական մարմինների մասնագիտացման կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների ոլորտում: Եվրոպական միության հին անդամ պետություններն ունեն մասնագիտացված մարմիններ, որոնք լիազորված են բացահայտելու և քննելու բարդ հանցագործությունները, ինչպիսիք են Իտալիայում մաֆիայի դեմ պայքարի դատախազությունը (Procura Nazionale Antimafia), Իսպանիայում դատախազության կազմում գործող կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը (Fiscalía Anticorrupción), Միացյալ Թագավորությունում գործող Լուրջ խարդախությունների գրասենյակը (Serious Fraud Office) և այլ նմանատիպ կառույցներ<sup>30</sup>: Սույն բաժնում քննարկման առարկա կդարձվեն ինչպես առանձին երկրների փորձը, այնպես էլ հակակոռուպցիոն պայքարին առնչվող միջազգային կառույցների կողմից ձևավորված ստանդարտները և առաջարկությունները:

Դատախազական ընդհանուր համակարգից առանձին հակակոռուպցիոն դատախազական մարմին ունենալու միտումը հատկապես բնորոշ է ԵՄ ինտեգրացիոն ուղղին ընտրած պետություններին:

Եվրոպական տարածաշրջանում, հետևելով Խորվաթիայի օրինակին և վերջինիս՝ 2001 թվականին ստեղծած Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (USKOK) փորձին, Սլովենիայի Հանրապետությունը 2011 թվականին հիմնեց Հատուկ դատախազությունը (Specializirano državno tožilstvo Republike Slovenije): Սերբիայի Հանրապետությունում կոռուպցիայի, կազմակերպված հանցավորության և ծանր հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում պետական մարմինների լիազորությունները կարգավորվել են մեկ միասնական օրենքով, իսկ

www.aradaradutyjournal.com

Հատուկ դատախազության գործունեությունը սկսվել է 2003 թվականին (Tužilaštvo za organizovani kriminal – TOK): Լիտվայում 2001 թվականին ստեղծվել է Հատուկ դատախազություն՝ որպես առանձին մարմին Պետական դատախազության կազմում, որը փոխարինել է մինչ այդ գործող ընդհանուր դատախազության կազմում գործող բաժնին: Ռումինիայում 2002 թվականին հիմնադրված Ազգային հակակոռուպցիոն տնօրինությունը (Direcția Națională Anticorupție - DNA) գործնական գործունեություն է ծավալում 2005 թվականից, իսկ Կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի տնօրինությունը (Direcția de Investigare a Infracțiunilor de Criminalitate Organizată și Terorism - DIICOT)՝ 2004 թվականից: Մակեդոնիայում 2008 թվականին Գերագույն պետական դատախազության (Јавно обвинителство на Република Северна Македонија) կազմում ստեղծվել է Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական դատախազությունը (Основно јавно обвинителство за гонење на организиран криминал и корупција): Բուլղարիայում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի Հատուկ դատախազությունն (Специализирана прокуратура) ու Հատուկ դատարանը ստեղծվել են համապատասխան օրենսդրական ակտերում 2010 թվականի դեկտեմբերին և 2011 թվականի հունվարին կատարված փոփոխությունների արդյունքում և գործում են 2012 թվականի հունվարից՝ (մզեցումները և թարգմանությունը հեղ.):

1) Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակ ( որվաթիա) Հակամարտությունները, հովանավորչությունն ու թերի իրականացված մասնավորեցման գործընթացը որվաթիայի անկախության առաջին տասնամյակում (նախկին Հարավսլավիայից անկախանալուց հետո) լուրջ վնաս հասցրեցին երկրի միջազգային հեղինակությանը: 2000 թվականին իշխանափոխությունից հետո ձևավորվեց խորհրդարանական կոնսենսուս՝ եվրոպական ինտեգրման ուղին ընտրելու շուրջ, սակայն Եվրոպական միությունը պահանջում էր իրական առաջընթաց կոռուպցիայի դեմ պայքարում՝ արտագուլելով մաս քաղաքացիների մտահոգությունները: Այս պահանջներին ի պատասխան՝ որվաթիայի կառավարությունը 2001 թվականին ստեղծեց մասնագիտացված դատախազական մարմին՝ Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակը (Ured za suzbijanje korupcije i organiziranog kriminaliteta – USKOK), որպեսզի այն գործի համատեղ այլ հակակոռուպցիոն ինստիտուտների հետ:

Թեև USKOK-ը ձևականորեն հանդիսանում է Խորվաթիայի Հանրապետության Պետական դա-

տախազության (Državno odvjetništvo) կառուցվածքային ստորաբաժանում, այն ունի սեփական կառուցվածքն ու ներքին ստորաբաժանումները՝ դատախազական, ֆինանսական հետաքննությունների, միջազգային համագործակցության և համատեղ քննությունների, ինչը ապահովում է գործառույթային որոշակի ինքնավարություն կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության գործերով վարույթ իրականացնելու հարցում: Այլ դատախազները իրավունք չունեն միջամտելու USKOK-ի վարույթում գտնվող գործերին: Հատկանշական է, որ USKOK-ը ստեղծվել է Լիտվայի Հատուկ հետաքննությունների ծառայության և Հոնկոնգի Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովի հաշվառմամբ՝ որպես այդ երկուսի միջև միջանկյալ տարբերակ՝:

USKOK-ի ղեկավարն ունի Գլխավոր դատախազի տեղակալի կարգավիճակ և նշանակվում է Գլխավոր դատախազի կողմից՝ Արդարադատության նախարարության և դատախազական խորհրդի/կոմիտեի կողմից ուսումնասիրված առաջարկությունների հիման վրա: Նույն կերպ, USKOK-ի մասնագիտացված դատախազները նշանակվում են Գլխավոր դատախազի կողմից՝ USKOK-ի ղեկավարության ներկայացմամբ, հստակ սահմանված ժամկետներով: Գրասենյակում աշխատող բոլոր անձինք ենթարկվում են անվտանգության ստուգումների մինչև պաշտոնի նշանակումը:

Արդյունքում՝ 2012 թվականին USKOK-ը հասել է ավելի քան 95% դատավճռային արդյունավետության, հաջողությամբ հետապնդելով նախկին վարչապետի, նախկին փոխվարչապետի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների: Կոռուպցիայի դեմ պայքարում էական առաջընթաց ապահովելով՝ USKOK-ի գործունեությունը նպաստեց իրավունքի գերակայության ամրապնդմանը և վերացրեց որվաթիայի՝ Եվրոպական միությանը անդամակցելու ճանապարհին առկա հիմնական խոչընդոտներից մեկը՝:

USKOK-ի օրինակը ցույց է տալիս, որ արդյունավետ հակակոռուպցիոն քրեական պայքարը միշտ չէ, որ պահանջում է լիարժեք ինստիտուցիոնալ առանձնացում: Սակայն գործառույթային անկախությունը, իրավասությունների բացառիկությունը և մասնագիտացումը հանդիսանում են նվազագույն և անփոխարինելի պայմաններ: Ներկայումս Հայաստանի դատախազական համակարգը չի քավարարում նույնիսկ նման նվազագույն պայմաններին:

2) Ազգային հակակոռուպցիոն տնօրինություն (Ռումինիա)

Ռումինիայի Ազգային հակակոռուպցիոն տնօրինությունը (DNA) ստեղծվել է 2002 թվականին Ռումինիայի կառավարության № 43/2002 Արտա-

կարգ հրամանագրով<sup>37</sup> : Գրա հիմնադրումը սերտորեն կապված էր երկրի՝ Եվրոպական միությանը անդամակցելու նախապատրաստական գործընթացի հետ՝ որպես Ռումինիայի ջանքերի մաս՝ համապատասխանելու ԵՄ պահանջներին կոռուպցիայի կանխարգելման և իրավական հետապնդման ոլորտներում, որոնք անդամակցության հիմնական պայմաններից էին: DNA-ն գործում է որպես ինքնավար մարմին՝ կցված Վճռաբեկ դատարանին (High Court of Cassation and Justice):

USKOK-ի նման, DNA-ն նույնպես լիովին ինստիտուցիոնալապես անկախ չէ, սակայն այն համարվում է Եվրոպայում հակակոռուպցիոն դատախազական ամենահզոր և առավել ինքնավար մոդելներից մեկը:

DNA-ն ղեկավարում են գլխավոր դատախազը, վերջինիս երկու տեղակալները և չորս վարչությունների ղեկավար դատախազները: Նրանք առաջադրվում են Արդարադատության նախարարի կողմից, նշանակվում են Ռումինիայի նախագահի կողմից և հաստատվում են Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի (Superior Council of Magistracy) կողմից՝ երեք տարի ժամկետով, մեկ անգամ վերանշանակվելու հնարավորությամբ<sup>38</sup> : DNA-ի կազմում ընդգրկված անձանց կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունները քննվում են այլ դատախազական մարմինների դատախազների կողմից: DNA-ն ունի բացառիկ իրավասություն՝ բարձր մակարդակի կոռուպցիայի, բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ կոռուպցիոն հանցագործությունների, խոշոր չափերի ֆինանսական կոռուպցիայի գործերով<sup>39</sup> : Այլ դատախազները իրավունք չունեն իրենց վարույթ վերցնելու կամ որևէ ձևով միջամտելու DNA-ի վարույթում գտնվող գործերին, իսկ այն ղեկավարում, երբ այլ դատախազական մարմինների դատախազները քրեական վարույթ իրականացնելու ընթացքում պարզվում են, որ գործի առարկա հանդիսացող հանցագործությունը այն հանցագործություններից է, որոնք արտակարգ հրամանագրով վերապահված են DNA-ի իրավասությանը, նրանք պարտավոր են անմիջապես տեղեկացնել վերջինիս դատախազներին<sup>40</sup> :

Հատկանշական են նաև DNA-ի դատախազների համար սահմանված փորձառության պահանջները: Մարմնի ստեղծման պահին Ազգային հակակոռուպցիոն տնօրինությունում դատախազ նշանակվելու համար թեկնածուն պետք է ունենար առնվազն 6 տարվա աշխատանքային փորձ՝ որպես դատախազ կամ դատավոր, իսկ գլխավոր դատախազի պաշտոնի համար պահանջը ավելի խիստ էր՝ առնվազն 10 տարվա փորձ՝ որպես դատախազ կամ դատավոր<sup>41</sup> : Ներկայումս DNA-ում նույնիսկ շարքային դատախազ նշանակվելու համար սահմանված է առնվազն 10 տարվա աշխատանքային փորձի պահանջ՝ որպես դատախազ կամ դատավոր<sup>42</sup> :

Եվրոպական հանձնաժողովի 2014 թվականի հակակոռուպցիոն զեկույցում Ռումինիայի Ազգային հակակոռուպցիոն տնօրինությունը առանձնացվել է որպես հինգ դրական օրինակներից մեկը ԵՄ ողջ տարածքում գործող հակակոռուպցիոն մարմինների լավագույն փորձի համատեքստում՝ Սլովենիայի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (Slovenian Commission for Prevention of Corruption – CPC), Լատվիայի Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրոյի (KNAB), որվաթիայի Պետական դատախազությանը կցված Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (USKOK) և Իսպանիայի կենտրոնական մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազության հետ մեկտեղ<sup>43</sup> :

DNA-ի նախկին ղեկավար Լաուրա Քյովեշին հետագայում ընտրվեց Եվրոպական միության Եվրոպական հանրային դատախազության (EPPO) գլխավոր դատախազ, ինչը վկայում է նրա և DNA-ի նկատմամբ Եվրոպական միության բարձր վստահության մասին:

DNA-ի օրինակը ցույց է տալիս, որ բացարձակ անկախությունը Եվրոպայում հազվադեպ է, սակայն այն կարող է կոմպենսացվել գործառնության ինքնավարությամբ, հստակ և բացառիկ իրավասություններով, ինչպես նաև ինստիտուցիոնալ երաշխիքներով:

Ռումինիայի DNA-ն հաճախ դիտարկվում է նաև որպես կարևոր նախադեպ Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն կոմիտեի և հատուկ հակակոռուպցիոն դատախազության ձևավորման համար:

3) Հատուկ հակակոռուպցիոն դատախազություն (Ուկրաինա)

Վերջին շրջանում մերձիշխանական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կատարված կոռուպցիոն հանցանքների բացահայտումներից հետո՝ հատկապես հնչել են Ուկրաինական հակակոռուպցիոն մարմինների անունները: Խոսքը գնում է Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն կոմիտեի (Національне антикорупційне бюро України – НАБУ) և Ուկրաինայի հատուկ հակակոռուպցիոն դատախազության մասին (Спеціалізована антикорупційна прокуратура України – САП): Առաջինը, ինչպես տրամաբանորեն ենթադրվում է անվանումից, նախաքննական մարմին է, որը նաև իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն, իսկ երկրորդը՝ դատախազական գործառնություն իրականացնող Ուկրաինայի գլխավոր դատախազությունից առանձնացված հատուկ մարմին է:

САП-ը հիմնադրվել է 2015 թվականի սեպտեմ-

բերին, և դրա ձևավորումը սկսվել է Գլխավոր դատախազի 2015 թվականի սեպտեմբերի 22-ի հրամանով<sup>45</sup> : ԿԱՒ-ի և ՀԱԲՄ-ի ստեղծումը պայման էր Ուկրաինայի առջև Եվրոպական միության հետ վիզաների ազատականացման գործընթացի համար: ԿԱՒ-ը ստեղծվել է ՀԱԲՄ-ի կողմից քննվող վարույթների նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու և կոռուպցիոն գործերով դատարաններում մեղադրանքը պաշտպանելու նպատակով: Ի սկզբանե ԿԱՒ-ը չի վայելել իրական անկախություն Գլխավոր դատախազությունից և գործել է վերջինիս կազմում՝ որպես առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում<sup>46</sup> :

2023 թվականի դեկտեմբերին Ուկրաինայի խորհրդարանը ընդունեց № 3509-IX օրենքը, որով ԿԱՒ-ը դուրս բերվեց Գլխավոր դատախազության ինստիտուցիոնալ կառուցվածքից և դարձավ հանրային իրավունքի առանձին իրավաբանական անձ<sup>47</sup> : 2024 թվականի մարտի 19-ին ԿԱՒ-ը պաշտոնապես սկսեց գործել այդ առանձնացված կարգավիճակով<sup>48</sup> :

ՏՀԶԿ-ի (OECD) 2024 թվականի զեկույցի համաձայն, թեև ԿԱՒ-ը մասնագիտացված էր բարձր մակարդակի կոռուպցիայի գործերով, դրա նախկին ինստիտուցիոնալ կախվածությունը Գլխավոր դատախազությունից (սեփական լոգիստիկայի բացակայություն, գրագրության իրականացում Գլխավոր դատախազության միջոցով, օժանդակ ստորաբաժանումների բացակայություն) բացասաբար է ազդել ԿԱՒ-ի գործառնության արդյունավետության վրա<sup>49</sup> : Մասնավորապես, զեկույցում նշվում է.

«Այնուամենայնիվ, Գլխավոր դատախազությունից ինստիտուցիոնալ ինքնավարության բացակայությունը բացասաբար է անդրադառնում ԿԱՒ-ի գործունեության վրա: Մասնավորապես, ԿԱՒ-ը չունի ոչ միայն բավարար թվով դատախազներ, այլև ՏՏ, ֆինանսական, ներքին վերահսկողության և կադրային (HR) ստորաբաժանումներ, որոնք ընդգրկված են Գլխավոր դատախազության կառուցվածքում և կառավարվում են վերջինիս կողմից: ԿԱՒ-ի պաշտոնական գրագրությունն անցնում է Գլխավոր դատախազության միջոցով, ինչը խոչընդոտում է գործառնության արդյունավետությանը և ստեղծում է գաղտնիության ռիսկեր: Բացի այդ, նախկին ղեկավարության օրոք Գլխավոր դատախազությունը որոշ դեպքերում խոչընդոտել է արտահանման հարցումների նախաձեռնումը, ինչի հետևանքով սահմանափակվել է ԿԱՒ-ի մանրատի արդյունավետ իրականացումը<sup>50</sup> »:

ԿԱՒ-ի ստեղծման կարևորագույն ձեռքբերումներից մեկը համարվել է դրան ղեկավարության նշանակումը բաց մրցույթի միջոցով, որոնց շրջանակում ձևավորվող հանձնաժողովների կազմում ընդգրկված են նաև միջազգային կազմակերպու-

թյունների ներկայացուցիչներ: Այս մեխանիզմը կարևոր երաշխիք է ընտրության գործընթացի ֆանկցիկության և բարեխղճության ապահովման համար, ի տարբերություն այն ընթացակարգերի, որոնց դեպքում նման մարմինների ղեկավարությունը նշանակվում է իշխանությունների կողմից անմիջականորեն<sup>51</sup> :

Ինչպես ՀԱԲՄ-ի, այնպես էլ ԿԱՒ-ի գործունեությանը Գլխավոր դատախազությունը չի կարող միջամտել, քանի որ օրենքը բացառում էր Գլխավոր դատախազի կողմից կոնկրետ գործերով որևէ ազդեցություն, միջամտություն կամ ցուցում տալու հնարավորությունը: Ավելին, քաղաքական իշխանության կողմից այդ անկախությունը վերացնելու փորձերը արժանացել են խիստ և կոշտ արձագանքի թե՛ քաղաքացիների, թե՛ Եվրոպական միության կողմից: Այսպես, հուլիսի 22-ին Գերագույն Ռադան հաստատեց ՀԱԲՄ-ի և ԿԱՒ-ի անկախության հետևանքը՝ դրանք ենթարկելով երկրի Գլխավոր դատախազին, իսկ նույն օրը երկրի նախագահը ստորագրեց համապատասխան աղմկահարույց օրենքը: Օրենքի ընդունումը առաջացրեց զանգվածային բողոքի ցույցեր Կիևում և այլ քաղաքներում: Եվրոպական միությունը նույնպես իր մտահոգությունն արտահայտեց տեղի ունեցածի կապակցությամբ: Չանգվածային հանրահավաքների ֆոնին հուլիսի 24-ին Ուկրաինայի նախագահը Գերագույն Ռադա ներկայացրեց նոր օրինագիծ՝ № 13533, որով նախատեսվում էր կրճատել Գլխավոր դատախազի լիազորությունները ՀԱԲՄ-ի և ԿԱՒ-ի նկատմամբ վերահսկողության հարցում և վերականգնել վերջիններիս ինքնուրույնությունը<sup>52</sup> :

4) Միջազգային ստանդարտներ

Կոռուպցիայի դեմ պայքար մղող մարմինների՝ այդ թվում նաև դատախազության, ընդհանուր համակարգից առանձնացման և մասնագիտացման անհրաժեշտության մասին են վկայում ոչ միայն այդ գործում հաջողություններ գրանցած մի շարք երկրների օրինակները, այլ նաև հակակոռուպցիոն գործունեություն ծավալող մի շարք կառույցների սահմանած չափանիշները: Առաջին հերթին խոսքը Եվրոպայի Խորհրդի մասին է: Վերջինիս կողմից 1999 թվականին ընդունվել է Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոմվենցիան, որի 20-րդ հոդվածով հստակ անգրված է կոռուպցիայի դեմ պայքարող մասնագիտացված մարմիններ ունենալու պահանջը.

«Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան անհրաժեշտ անկախություն, այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորու-

թյուն ունենան իրենց գործունեությունն իրականացնել արդյունավետորեն և առանց որևէ անհիմն ճնշման: Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերը իրենց գործունեության համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ:»<sup>33</sup> :

Համանման պարտավորություն անդամ պետությունների համար սահմանված է նաև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 36-րդ հոդվածով, որը, մասնավորապես, սահմանում է, որ.

«Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառնությունները առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցները իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և պաշարներով: »:

Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (Organisation for Economic Co-operation and Development – OECD) «Մասնագիտացված հակակոռուպցիոն ինստիտուտների» վերաբերյալ զեկույցը ցույց է տալիս, որ թեև պետությունները կարող են ընտրել կոռուպցիայի դեմ պայքարի տարբեր ինստիտուցիոնալ մոդելներ, մասնագիտացված մարմինները՝ հատկապես դատախազական մակարդակում, արդյունավետ լինելու համար պետք է վայելեն իրական գործառնության անկախություն և համակարգային պաշտպանական երաշխիքներ: Մասնավորապես, զեկույցում նշվում է, որ՝

«Հակակոռուպցիոն մարմինների ստեղծման կամ ամրապնդման հարցը դիտարկելիս պետությունները պետք է հաշվի առնեն հակակոռուպցիոն գործառնությունների ամբողջ շրջանակը, այդ թվում՝ հետևյալը.

Հակակոռուպցիոն մարմինների մասնագիտացումը ենթադրում է մասնագիտացված աշխատակազմի առկայություն, որն օժտված է հատուկ հմտություններով և կոռուպցիայի դեմ պայքարի համար նախատեսված հստակ մանդատով: Մասնագիտացման ձևերը կարող են տարբեր լինել երկրից երկիր, և գոյություն չունի մեկ միասնական հաջող լուծում, որը կիրառելի կլինի բոլորի համար: Օրինակ, Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի վերաբերյալ քրեական իրավունքի կոնվենցիան» հստա-

կեցնում է իրավապահ մարմինների համար կիրառելի ստանդարտը, որը կարող է իրականացվել կամ հատուկ մարմնի ստեղծման, կամ գործող ինստիտուտների ներսում մի շարք մասնագիտացված անձանց նշանակման միջոցով: Միջազգային միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՏՀԶԿ անդամ երկրներում մասնագիտացումը հաճախ ապահովվում է գործող պետական մարմինների և սովորական իրավապահ կառույցների մակարդակում: Մինչդեռ անցումային և զարգացող երկրներում հաճախ ստեղծվում են առանձին մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններ, ինչը պայմանավորված է գործող կառույցներում կոռուպցիայի բարձր մակարդակով: Բացի այդ, նման երկրներում առանձին մասնագիտացված մարմինների ստեղծումը հաճախ հանդիսանում է դոկորնների և միջազգային կազմակերպությունների ճնշման արձագանք:

Անկախությունը նախ և առաջ նշանակում է, որ հակակոռուպցիոն մարմինները պետք է պաշտպանված լինեն անհարկի քաղաքական միջամտությունից: Դրա համար հիմնական նախապայմանը կոռուպցիայի դեմ պայքարի իրական քաղաքական կամքի առկայությունն է: Այդ քաղաքական կամքը պետք է ամրագրված լինի համապարփակ հակակոռուպցիոն ռազմավարության մեջ: Անկախության մակարդակը կարող է տարբեր լինել՝ կախված կոնկրետ կարիքներից և պայմաններից: Փորձը ցույց է տալիս, որ հատկապես կարևոր են կառուցվածքային և գործառնության ինքնավարությունը, ինչպես նաև հատուկ մարմնի, վարչության կամ ստորաբաժանման հստակ իրավական հիմքը և մանդատը: Սա հատկապես կարևոր է իրավապահ մարմինների համար: Տնօրենի նշանակման և ազատման թափանցիկ ընթացակարգերը, ինչպես նաև մարդկային ռեսուրսների պատշաճ կառավարումն ու ներքին վերահսկողության մեխանիզմները, կարևոր տարբեր են անհարկի միջամտությունը կանխելու համար: Միաժամանակ, անկախությունը չպետք է նշանակի հաշվետվողականության բացակայություն. մասնագիտացված ծառայությունները պետք է գործեն իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան, պարբերաբար հաշվետվություններ ներկայացնեն գործադիր և օրենսդիր մարմիններին և ապահովեն հանրությանը իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվությամբ:» (ընդգծումները հեղ.)

ՏՀԶԿ-ի հակակոռուպցիոն ցանցի (Anti-Corruption Network – ACN) մոնիթորինգային հաշվետվություններն ու գնահատումները պարբերաբար խորհուրդ են տալիս երկրներին ուժեղացնել իրավակիրառման արդյունավետությունը՝ ստեղծելով կոռուպցիայի դեմ պայքարի համար նախատեսված բարձր մակարդակի մասնագիտացված

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

մարմիններ՝ հստակ սահմանված մանդատներով (նախաքննությունը, քրեական հետապնդում և դատական քննություն), ինչպես նաև ապահովելով դրանց անկախությունն ու բավարար ֆինանսավորումը : ACN-ի գնահատումները ընդգծում են, որ թեև բազմաթիվ երկրներ ընդունել են կոռուպցիայի կանխարգելման ռազմավարություններ և քաղաքականություններ, դրանք հաճախ հետ են մնում իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ մեխանիզմների ներդրման հարցում, այդ թվում՝ մասնագիտացված իրավապահ մեխանիզմների, օրինակ՝ առանձին մասնագիտացված դատախազական ստորաբաժանումների ձևավորման հարցում, ինչը դիտարկվում է որպես լուծման ենթակա բաց : ՏՀԶԿ-ի թեմատիկ ուսումնասիրությունը դատախազների անկախության վերաբերյալ ցույց է տալիս, որ դատախազների անկախությունը և մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազական մարմինների առկայությունը հանդիսանում են երկրի կարողության առանցքային որոշիչ գործոններ՝ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու համար :

Վերոգրյալից ակնհայտ է, թե որքան մեծ կարևորություն է տրվում գործառութային անկախ և մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններ՝ այդ թվում նաև դատախազություն, ունենալուն միջազգային հարթությունում և հատկապես եվրոպական տարածաշրջանում:

Ամփոփելով այլ երկրների փորձի և միջազգային կառույցների կողմից սահմանված չափանիշների ուսումնասիրությունը՝ կարելի է արձանագրել, որ գործառութային անկախությունը, բացառիկ իրավասությունը և մասնագիտացվածությունը հանդիսանում են նվազագույն էական պայմաններ, որոնք ներկայացվում են հակակոռուպցիոն մարմիններին, այդ թվում՝ դատախազական համակարգում գործող առանձնացված մարմին կամ ստորաբաժանմանը: Դատախազական ընդհանուր համակարգից առանձնացված հակակոռուպցիոն մասնագիտացված հատուկ մարմնի առկայությունը հատկապես բնորոշ է այն պետություններին, որոնք ընտրել են Եվրոպական միության ինտեգրման ուղին: Հետևաբար, նման համարժեք ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացումը՝ մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազական մարմնի ստեղծման միջոցով, Հայաստանի Հանրապետությունը կմոտեցնի եվրոպական հակակոռուպցիոն չափանիշներին:

**4. Առաջարկվող մոդելը**

Դատախազական ներկա համակարգի վերոգրյալ թերությունների և հնարավոր ռիսկերի լույսի ներքո տրամաբանորեն բարեփոխման լավագույն տարբերակն է թվում դատախազության ներկա համակարգից լրիվ առանձնացված անկախ մարմնի ստեղծումը: Այնուամենայնիվ, նման հնա-

րավորությունը բացառված է ՀՀ սահմանադրության համապատասխան կարգավորումների հաշվառմամբ: Այսպես, ի տարբերություն քննչական մարմիններին նվիրված 178-րդ հոդվածի, որն ուղղակիորեն նախատեսում է մեկից ավելի քննչական մարմին ունենալու հնարավորությունը, դատախազությանը վերաբերող 176-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը, ինչը բացառում է տվյալ միասնական համակարգից դուրս դատախազական գործառութային գոյությունը:

Այլընտրանքի բացակայության նման պայմաններում, առկա խնդիրների լավագույն տարբերակն է թվում դատախազության ներքին համակարգային փոփոխությունների իրականացումը՝ ուղղված հակակոռուպցիոն մասնագիտացված ստորաբաժանման գործառութային անկախությանը և առանձնահատուկ կարգավիճակի սահմանմանը:

Թեև լրիվ առանձնացված մարմնի ստեղծումը ներկա իրավական կարգավորումների լույսի ներքո հնարավոր չէ, դա չի բացառում դատախազության համակարգի կազմում գործառութային անկախության բարձր չափանիշին բավարարող առանձին ստորաբաժանման ստեղծումը:

Վերոգրյալի համար նախ և առաջ հարկավոր է ստեղծվող ստորաբաժանման ղեկավարի և անձնակազմի նշանակման նոր թափանցիկ և հրապարակային կարգի սահմանումը: Անկախությունը ստորաբաժանման պատրանքային կլինել, եթե վերջինիս ղեկավարը և անձնակազմը նշանակվելին և հեռացվելին գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազության այլ պաշտոնատար անձի կամ մարմնի կողմից: Տվյալ իրավիճակում լուծման լավագույն տարբերակն է թվում անկախ մրցութային խորհրդի կողմից նշանակման կամ նշանակման առաջարկի մոդելը, որը ներդրված է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակման դեպքում՝ դիտարկելով նաև խորհրդարանական փոքրամասնության և ՀՀ փաստաբանների պալատի ներգրավվածության հնարավորությունը: Պետք է սահմանվի նաև տվյալ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնավարման հստակ ժամկետ, որը պետք է լինի բավարար քաղաքական ցիկլի ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար՝ բացառելով նաև պաշտոնից հայեցողական ազատման հնարավորությունը:

Հաջորդ կարևոր քայլը գործառութային անկախության ապահովումն է դատավարական վերադատության բացառմամբ: Այլ կերպ ասած, տվյալ ստորաբաժանումից դուրս դատախազության որևէ մարմին կամ պաշտոնատար անձ՝ ներառյալ գլխավոր դատախազը, չպետք է իրավասություն ունենա որևէ եղանակով միջամտել տվյալ ստորաբա-

www.aradaradatuynjournal.com

ժանման ծառայողների ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված որևէ գործառույթի իրականացմանը: Ի թիվս այլնի, դա նշանակում է, որ պետք է բացառվի Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված մինչդատական վարույթում վերադաս դատախազի լիազորությունների իրականացումը տվյալ ստորաբաժանումից դուրս գտնվող որևէ դատախազի կողմից կամ վերջինիս կողմից առանձնացված ստորաբաժանման դատախազին որևէ հանձնարարություն տալը և այլն:

Ոչ պակաս կարևոր է ֆինանսական/բյուջետային անկախության գործիքների ներդրումը համապատասխան ստորաբաժանման համար: Իրապես դժվար է պատկերացնել իրական գործառույթային անկախությունը հակակոռուպցիոն ստորաբաժանման, եթե դրա գործունեության ապահովման գլխավոր գործիքներից մեկը՝ ֆինանսականը, կառավարվում է այն մարմնի կողմից, ումից անհրաժեշտ է հենց անկախանալ: Բյուջետային անկախության բացակայությունը զգալի կախվածության հարաբերությունների մեջ կղնի տվյալ ստորաբաժանումը գլխավոր դատախազության հետ, ինչը հղի է այն ռիսկերի բարձրացմամբ, որոնք զուպելու համար հենց անհրաժեշտ էր անկախ ստորաբաժանման ստեղծումը: Ընդամին, դիտարկման է արժանի գլխավոր դատախազության բյուջետային հատկացման որոշակի համամասնության պարտադիր հատկացումը համապատասխան ստորաբաժանմանն ապահովող գործիքակազմի ներդրումը: Մյուս կողմից, պետք է ապահովվի նաև բյուջետային անկախությունը քաղաքական իշխանությունից, որի համար լավագույն լուծումներից է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափի նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից պակաս լինելու արգելքի մեխանիզմը<sup>59</sup>, որը ներկայումս գործում է, օրինակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և վերջինիս աշխատակազմի համար<sup>60</sup>:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով 2026 թվականին ՀՀ նոր սահմանադրության նախագծի ներկայացման քաղաքական իշխանության մտադրությունը՝ նպատակահարմար է թվում դրանում ներառել նաև մեկից ավել դատախազական գործառույթներ ունեցող մարմինների գոյության հնարավորությունը, ինչը թույլ կտա հասնել սույն հետազոտության շրջանակներում վեր հանված խնդիրների ամբողջական լուծմանը՝ ստեղծելով ներկայիս դատախազությունից լրիվ անկախ նոր հակակոռուպցիոն հատուկ դատախազություն:

**Եզրակացություն**

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանգում ենք հետևյալ-

լին.

1. Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ բարեփոխումների համատեքստում դատախազության համակարգի գրեթե անփոփոխ մնալը չի կարող դիտարկվել որպես ողջամտորեն արդարացված լուծում:

2. Այլ երկրների լավագույն փորձի և միջազգային ստանդարտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն դատախազական մարմինների արդյունավետությունը պայմանավորված է ոչ այնքան դրանց ձևական ինստիտուցիոնալ կարգավիճակով, որքան՝ գործառութային անկախությամբ, բացառիկ իրավասությամբ և մասնագիտացմամբ: Այդ նվազագույն պայմանների բացակայությունը հանգեցնում է համակարգային խոցելիությունների, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկերի վերարտադրության և փոխզսպումների թուլացման:

3. Դատախազական ընդհանուր համակարգից առանձնացված հակակոռուպցիոն մասնագիտացված հատուկ մարմնի առկայությունը հատկապես բնորոշ է այն պետություններին, որոնք ընտրել են Եվրոպական միության ինտեգրման ուղին: Նման համարժեք ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացումը՝ մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազական մարմնի ստեղծման միջոցով, Հայաստանի Հանրապետությունը կմոտեցնի եվրոպական հակակոռուպցիոն չափանիշներին:

4. Հետազոտության շրջանակներում վերհանված խնդիրների լուծման լավագույն տարբերակն է թվում դատախազության ներքին համակարգային փոփոխությունների իրականացումը՝ ուղղված հակակոռուպցիոն մասնագիտացված ստորաբաժանման գործառութային անկախությանը և առանձնահատուկ կարգավիճակի սահմանմանը, ինչը առնվազն ենթադրելու է ստորաբաժանման ֆինանսական անկախությունը, տվյալ ստորաբաժանումից դուրս դատախազության որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից ստորաբաժանման իրավասությանը վերապահված որևէ գործով դատավարական որևէ միջամտության, այդ թվում՝ վերադաս դատախազի լիազորությունների իրականացման, բացառումը, ստորաբաժանման ղեկավարի և անձնակազմի նշանակման նոր թափանցիկ և հրապարակային կարգի սահմանումը:

5. Առաջարկվում է 2026 թվականի ՀՀ նոր սահմանադրության նախագծում ներառել նաև մեկից ավել դատախազական գործառույթներ ունեցող մարմինների գոյության հնարավորությունը, ինչը թույլ կտա հասնել սույն հետազոտության շրջանակներում վեր հանված խնդիրների ամբողջական լուծմանը՝ ստեղծելով ներկայիս դատախազությունից լրիվ անկախ նոր հակակոռուպցիոն հատուկ դատախազություն:

www.aradaradutyjournal.com

<sup>1</sup> Տես՝, ի թիվս այլնի, ՀՀ վարչապետի 2001 թվականի հունվարի 22-ի N 44 որոշումը, ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի N 1522-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը:

<sup>2</sup> Անհրաժեշտ է ընդգծել, որ նշված ժամանակաշրջանից առաջ ևս տեղի են ունեցել էական բարեփոխումներ, որոնցից հատկապես նշանակալից է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծումը:

<sup>3</sup> ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն Ռազմավարություն

<sup>4</sup> 2021 թ.-ի մարտի 24-ին ընդունված Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդված 1-ին մաս

<sup>5</sup> Ibid, 2-րդ մաս

<sup>6</sup> Ibid, 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ

<sup>7</sup> Ibid, 18-րդ հոդվածի 1-ին մաս

<sup>8</sup> 2014 թ.-ի մայիսի 19-ին ընդունված «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մաս

<sup>9</sup> 2021 թ.-ի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մաս

<sup>10</sup> 2015 թ.-ի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդված

<sup>11</sup> <https://www.prosecutor.am/structure>

<sup>12</sup> 2017 թ.-ի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ

<sup>13</sup> 2020 թ.-ի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ

<sup>14</sup> 2017 թ.-ի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 33.1-րդ հոդվածի 2-րդ մաս

<sup>15</sup> Ibid, 38-րդ հոդված

<sup>16</sup> Ibid, 59-րդ հոդված

<sup>17</sup> Ibid, 60-րդ հոդված

<sup>18</sup> Ibid, 23-րդ հոդված

<sup>19</sup> 2018 թ.-ի փետրվարի 7-ին ընդունված ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 15-րդ հոդված

<sup>20</sup> Ibid.

<sup>21</sup> Ibid, 112-րդ հոդված

<sup>22</sup> Ibid, 24-րդ հոդված

<sup>23</sup> 2021 թ.-ի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդված

<sup>24</sup> Ibid, 260-րդ հոդված

<sup>25</sup> Ibid, 262-րդ հոդված

<sup>26</sup> [http://www.parliament.am/draftreading\\_docs7/K-785\\_DR2.pdf](http://www.parliament.am/draftreading_docs7/K-785_DR2.pdf)

<sup>27</sup> Հարկ է նշել, որ դատախազության կոռուպցիոն բարձր ռիսկայնության մասին դատողությունը պայմանավորված է բացառապես օբյեկտիվ հանգամանքներով՝ գլխավորապես բացառիկ լայնածավալ լիազորությունների առկայությամբ, և որևէ դեպքում չի հանդիսանում գնահատական կամ կարծիք դատախազության ներկա կամ նախկին պաշտոնատար անձանց վերաբերյալ:

<sup>28</sup> 2021 թ.-ի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մաս

<sup>29</sup> Ibid, 4-րդ մաս

<sup>30</sup> The Institutional Framework for Investigations of Corruption and Organized Crime – Comparative Models, Institut Alternativa, 2013

<sup>31</sup> Ibid.

<sup>32</sup> Gabriel Kuris, Cleaning House: Croatia Mops Up High-Level Corruption, 2005–2012, Princeton University, 2013

<sup>33</sup> [https://uskok.hr/en/organisation-uskok?utm\\_](https://uskok.hr/en/organisation-uskok?utm_)

<sup>34</sup> Gabriel Kuris, Cleaning House: Croatia Mops Up High-Level Corruption, 2005–2012, Princeton University, 2013

<sup>35</sup> <https://uskok.hr/en/head-uskok-and-deputy-heads>

<sup>36</sup> Gabriel Kuris, Cleaning House: Croatia Mops Up High-Level Corruption, 2005–2012, Princeton University, 2013

<sup>37</sup> Emergency Ordinance no. 43 of April 4, 2002 regarding the National Anticorruption Prosecutor’s Office

<sup>38</sup> Article 149 of the Law No. 303 of November 15, 2022 On The Status of Judges and Prosecutors

<sup>39</sup> Emergency Ordinance no. 43 of April 4, 2002 regarding the National Anticorruption Prosecutor’s Office

<sup>40</sup> Ibid, Article 15

<sup>41</sup> Ibid, Art 9

<sup>42</sup> <https://legislatie.just.ro/public/DetaliuDocument/274205?>

<sup>43</sup> [https://web.archive.org/web/20170829144258/https://ec.europa.eu/home-affairs/sites/homeaffairs/files/e-library/docu-](https://web.archive.org/web/20170829144258/https://ec.europa.eu/home-affairs/sites/homeaffairs/files/e-library/documents/policies/organized-crime-and-human-trafficking/corruption/docs/acr_2014_en.pdf)

<sup>44</sup> <https://glavnoe.in.ua/ru/novosti/nabu-y-sap-raskryly-masshtabnyu-korrupezyonnyu-shemu-v-enerhetycheskoj-sfere>

<sup>45</sup> <https://www.rbc.ua/rus/news/shokin-podpisa-prikaz-sozdani-spetsializirovannoy-1442930934.html>

<sup>46</sup> Law of Ukraine “On the Prosecutor’s Office” Article 8-1

<sup>47</sup> <https://en.interfax.com.ua/news/general/952884.html?>

<sup>48</sup> <https://www.pravda.com.ua/eng/news/2024/03/21/7447567/?>

<sup>49</sup> [https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/review-of-anti-corruption-reforms-in-ukraine-under-the-fifth-round-of-monitoring\\_b824ec81/9e03ebb6-en.pdf?](https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/review-of-anti-corruption-reforms-in-ukraine-under-the-fifth-round-of-monitoring_b824ec81/9e03ebb6-en.pdf?)

<sup>50</sup> Ibid.

<sup>51</sup> <https://www.dw.com/ru/nezavisimaa-zavisimost-osnovnye-fakty-o-nabu-i-sap/a-73418829>

<sup>52</sup> <https://www.dw.com/ru/v-evrokomissii-privetstvuyt-novyy-zakon-o-nabu-i-sap/a-73488458#:~:>

<sup>53</sup> 1999 թ.-ին ընդունված Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 20-րդ հոդված

<sup>54</sup> 2003 թ.-ին ընդունված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 36-րդ հոդված

<sup>55</sup> OECD report on Specialised Anti-Corruption Institutions

<sup>56</sup> [https://www.oecd.org/en/publications/combating-high-level-corruption-in-eastern-europe\\_3c82f87d-en/full-report/component-7.html?](https://www.oecd.org/en/publications/combating-high-level-corruption-in-eastern-europe_3c82f87d-en/full-report/component-7.html?)

<sup>57</sup> Ibid.

<sup>58</sup> <https://www.oecd.org/content/dam/oecd/en/networks/acn/documents-%28pdfs%29/Independence-of-Prosecutors.pdf?>

<sup>59</sup> Այդպիսի մեխանիզմի ներդրում, ըստ իս, անհրաժեշտ է մասնաձև հսկակոռուպցիոն կոմիտեի պարագայում:

<sup>60</sup> 2016 թ.-ի դեկտեմբերի 16-ին ընդունված Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մաս

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

1. 2015 թ.-ի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրություն:
2. 1999 թ.-ին ընդունված Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա:
3. 2003 թ.-ին ընդունված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա:
4. 2016 թ.-ի դեկտեմբերի 16-ին ընդունված Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենք:
5. 2018 թ.-ի փետրվարի 7-ին ընդունված ՀՀ Գատական օրենսգիրք սահմանադրական օրենք:
6. 2021 թ.-ի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
7. 2017 թ.-ի նոյեմբերի 17-ին ընդունված «Գատախազության մասին» ՀՀ օրենք:
8. 2020 թ.-ի ապրիլի 16-ին ընդունված «Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք:
9. 2021 թ.-ի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք:
10. 2014 թ.-ի մայիսի 19-ին ընդունված «Բննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք:
11. ՀՀ վարչապետի 2001 թվականի հունվարի 22-ի N 44 որոշում:
12. ՀՀ վարչապետի 2001 թվականի հունվարի 22-ի N 44 որոշում:
13. ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի N 1522-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր:
14. ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն Ռազմավարություն:
15. Emergency Ordinance no. 43 of April 4, 2002 regarding the National Anticorruption Prosecutor’s Office.
16. Law No. 303 of November 15, 2022 On The Status of Judges and Prosecutors.
17. Law of Ukraine “On the Prosecutor’s Office”.
18. The Institutional Framework for Investigations of Corruption and Organized Crime – Comparative Models, Institut Alternativa, 2013.
19. Gabriel Kuris, Cleaning House: Croatia Mops Up High-Level Corruption, 2005–2012, Princeton University, 2013.
20. OECD report on Specialised Anti-Corruption Institutions.
21. <https://www.prosecutor.am/structure>
22. [http://www.parliament.am/draftreading\\_docs7/K-785\\_DR2.pdf](http://www.parliament.am/draftreading_docs7/K-785_DR2.pdf)
23. [https://uskok.hr/en/organisation-uskok?utm\\_](https://uskok.hr/en/organisation-uskok?utm_)
24. <https://uskok.hr/en/head-uskok-and-deputy-heads>
25. <https://legislatie.just.ro/public/DetaliiDocument/274205?>
26. [https://web.archive.org/web/20170829144258/https://ec.europa.eu/home-affairs/sites/homeaffairs/files/e-library/documents/policies/organized-crime-and-human-trafficking/corruption/docs/acr\\_2014\\_en.pdf](https://web.archive.org/web/20170829144258/https://ec.europa.eu/home-affairs/sites/homeaffairs/files/e-library/documents/policies/organized-crime-and-human-trafficking/corruption/docs/acr_2014_en.pdf)
27. <https://glavnoe.in.ua/ru/novosti/nabu-y-sap-raskryly-masshtabnuyu-korruptcyonnuyu-shemu-v-enerhetycheskoj-sfere>
28. <https://www.rbc.ua/rus/news/shokin-podpisal-prikaz-sozdani-spetsializirovannoy-1442930934.html>
29. <https://en.interfax.com.ua/news/general/952884.html?>
30. <https://www.pravda.com.ua/eng/news/2024/03/21/7447567/?>
31. [https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/review-of-anti-corruption-reforms-in-ukraine-under-the-fifth-round-of-monitoring\\_b824ec81/9e03ebb6-en.pdf?](https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/review-of-anti-corruption-reforms-in-ukraine-under-the-fifth-round-of-monitoring_b824ec81/9e03ebb6-en.pdf?)
32. <https://www.dw.com/ru/nezavisimaa-zavisimost-osnovnye-fakty-o-nabu-i-sap/a-73418829>
33. <https://www.dw.com/ru/v-evrokomissii-privetstvuyt-novyy-zakon-o-nabu-i-sap/a-73488458#:~:>
34. [https://www.oecd.org/en/publications/combating-high-level-corruption-in-eastern-europe\\_3c82f87d-en/full-report/component-7.html?](https://www.oecd.org/en/publications/combating-high-level-corruption-in-eastern-europe_3c82f87d-en/full-report/component-7.html?)
35. <https://www.oecd.org/content/dam/oecd/en/networks/acn/documents-%28pdfs%29/Independence-of-Prosecutors.pdf?>

www.aradaradutyjournal.com



At the same time, the Prosecutor's Office of the Republic of Armenia has largely remained outside the scope of substantial systemic reforms, limiting changes to the establishment of units responsible for supervising the investigation of corruption offences and for exercising functions related to the confiscation of property of illegal origin. Meanwhile, the Prosecutor's Office constitutes an indispensable key actor in the fight against corruption in both the criminal and civil domains.

This article is devoted to the issue of establishing a special prosecutorial body for corruption cases, institutionally separated from the Prosecutor General's Office of the Republic of Armenia. In particular, the study examines the justification of the current institutional arrangement and the necessity of creating a new independent body.

The article seeks to provide a comprehensive analysis of the existing anti-corruption system in the Republic of Armenia, with particular attention paid to its problematic elements. International best practices relevant to the subject are also examined.

Inter alia, the relevance of the chosen topic is evidenced by the prioritisation of the anti-corruption strategy within state policy, the need for the continuous improvement of anti-corruption instruments - including the introduction of checks and balances in areas characterised by high corruption risks - and the necessity of preventing the consolidation of powers.

**Key words:** prosecution, anti-corruption strategy, checks and balances, anti-corruption system, corruption risks.

Բնագիրը ներկայացվել է 22.12.2025թ.  
Ընդունվել է տպագրության 19.03.26թ.